«Շիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ

2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ՄԱՅՐԵՆԻ

Արքայական խոսքը մեր կմնա հավետ...

Վահան Տերյան

**1.** Գտի՛ր և ընդգծի՛ր նույն արմատն ունեցող բառերը (2 միավոր)։

Դռնբաց, փակբերան, հարևան, դրկից, ներս, դուրս, քողտիկ, դրանիկ։

**2.** Տրված բառերում մի փոփոխությո՛ւն արա, որ դառնան՝ (3 միավոր)

Բույր-ը՝ անթիվ-անհամար -բյուր---------------------------

Սյուն-ը՝ այս սույն----------------------------------

Թույր-ը՝ սխալ բան թյուր-----------------------------------

Հյուր-ը՝ կրակ հուր----------------------------------

Հույն-ը՝ գետի հոսելու տեղը--------հուն-------------------------

Ոստայնը՝ մայրաքաղաք ------------ոստան------------

**3.** Ի՞նչ պիտի անես, որ հազար թվականը դառնա՝ (2 միավոր)

որքա՞ն հարցին պատասխանող ածանցավոր բառ - -----հազարական-------

ինչպիսի՞ հարցին պատասխանող ածանցավոր բառ --հազարավոր----

ինչպիսի՞ հարցին պատասխանող և գույների առատություն նշող բարդ բառ ------------հազարագույն, հազարերանգ--------------------------

ինչպիսի՞ հարցին պատասխանող և տարիք նշող բարդածանցավոր բառ ---------------հազարամյա-----

**4.** Ամեն շարքում մեկ բառ պակաս է, լրացրո՛ւ (3 միավոր)

Բարկանալ, զայրանալ, կատաղել------մոլեգնել----------------

Գեղեցիկ, սիրուն, գեղանի-----չնաշխարհիկ (գողտրիկ, արմաղան, աղվոր, խոորտիկ)--

Շոր, զգեստ, հագուստ, ---հանդերձ (տարազ)-----------------------------

Անկողմնակալ, արդարացի, շիտակ----անաչառ (արդարադատ, արդարամիտ)---

Մառախուղ, մշուշ, մեգ, շամանդաղ --(թուխպ, բալ)---------------

Մելամաղձոտ, տխուր, թախծոտ---տրտում-----------------------------

**5.** Գուշակի՛ր բառը՝ (2 միավոր)

Դժոխք բառի հականիշը+ տեղ բառի հոմանիշը = դրախտավայր---------------

Չար բառի հականիշը + մեր մարմնին արյուն մատակարարող օրգանը-բարեսիրտ--

Տղամարդ բառի հոմանիշը+ ու + նժույգ բառի հոմանիշը=--այրուձի---

Բարձրանալ բառի հոմանիշի արմատը + և + զիջել բառի արմատը=-ելևէջ---

**6.** Ասա՛ մեկ բառով (2 միավոր)

Աշխարհով մեկ լինել ---ուրախանալ, ցնծալ------------------------

Պատի ծեփ դառնալ ---գունատվել, դժգունել, սփրթնել-------------------

Մատ թափ տալ սպառնալ---------------------------------

Խելքահան անել մոլորեցնել---------------------------------

**7.** Պատկերացրո՛ւ, որ բնության երևույթները, ծառերը խոսել գիտեն: Հորինի՛ր անձրևի և ծաղկած ծառի զրույցը (6 միավոր):

| Միավոր | Նկարագրություն |
|---|---|
| 6 | 1. Կիրառել է հարուստ բառապաշար:<br>2. Դրսևորել է ստեղծագործական մոտեցում և վառ երևակայություն:<br>3. Մտքերն ունեն տրամաբանական հաջորդականություն:<br>4. Խոսքը պատկերավոր է, անմիջական:<br>5. Գերազանցորեն պահպանված են երկխոսություն գրելու կանոնները:<br>6. Ուղղագրական, կետադրական, քերականական սխալներ, վրիպակներ չկան: |
| 5 | 1. Կիրառել է հարուստ բառապաշար:<br>2. Դրսևորել է ստեղծագործական մոտեցում և երևակայություն:<br>3. Մտքերն ունեն տրամաբանական հաջորդականություն:<br>4. Խոսքը պատկերավոր է:<br>5. Պահպանել է երկխոսություն գրելու կանոնները:<br>6. Ուղղագրական, կետադրական, քերականական 1-2 սխալ, վրիպակներ կան: |
| 4-3 | 1. Բառապաշարն աղքատիկ է:<br>2. Ստեղծագործական մոտեցում և երևակայություն հանդես չի բերել:<br>3. Մտքերի տրամաբանական հաջորդականությունը 1-2 տեղ խախտված է:<br>4. Խոսքը պատկերավոր չէ:<br>5. Մասամբ պահպանել է երկխոսություն գրելու կանոնները:<br>6. Ուղղագրական, կետադրական, քերականական 4-5 սխալներ, վրիպակներ կան: |

| | |
|---|---|
| 2-1 | 1. Բառապաշարն աղքատիկ է: Կան բառագործածության սխալներ:<br>2. Ստեղծագործական մոտեցումը և երևակայությունը բացակայում են:<br>3. Պահպանված չեն մտքերի հաջորդական ընթացքը:<br>4. Խոսքը պատկերավոր չէ:<br>5. Պահպանված չեն երկխոսություն գրելու կանոնները:<br>6. Ուղղագրական, կետադրական, քերականական 6-7 սխալներ, վրիպակներ կան: |
| 0 | Զրույցը չի գրել |